ՄԻՏՔ-Ի ՅԱՒԵԼՈՒԱԾ

№ 15

ՄԵՐԺՈՒՄ ԵՒ ՎՆԱՍԱԿԱՐ ԵՆՔ ՀԱՄԱՐՈՒՄ

—

Առաջնորդարանի յայտարարութեան վերջին կիսամեայքում այն գաղափարն է արծարծուած, որ բաղաբիս երեք դպրոցներն ունենան մի ընդհ. հոգաբարձութիւն եւ մի ընդհանուր տեսչութիւն: *Մեզ համար այս նոր առաջարկը բոլորովին անհասկանալի մնաց։*

Կենդրոնականը որ ունի իւր առաձին հոգաբարձութիւնը, որի վրայ «հսկում է» թեմ. խորհուրդը և թեմի առաջնորդը և որն ունի իւր յատուկ տեսուչը, տեսանք արդէն թէ որքան տխուր պայմաններում էր գտնում նա ուսումնական այս տարի, ուր մի շարք առարկաներ կամ չեն աւանդուել (կրօն, հանրահաշիւ, պարսկերէն) և կամ շատ վատ են տարուել։

Արդ, եթէ մի քանի մարմիններ և մի տեսուչ մի դպրոցի գործը ըստ պատշաճի տանել չեն կարողանում, ի՞նչ կլինի այդ երեք դպրոցների դրութիւնը, եթէ տրնօրինուի, ըստ առաջնորդարանի առաջարկի, մի մարմին մի տեսչութիւն բոլորի համար։

Վերցնենք այլ օրինակ։ Թիֆլիզում կայ Ներսիսեան դպրոցը, կան նաև բազմաթիւ ծխական այլ տասնեակ դպրոցներ։ Արդեօք այդտեղ Ներսիսեանի հոգաբարձութիւնը ու տեսուչը հոգաբարձու և տեսուչ են նաև միւս ծխական դպրոցների համար։ Նոյնը վերցրէք նաև Երևանի թեմականի և ծխական դպրոցների մասին։

Ոչ մի տեղում այդպէս բան չկայ։ Ծխական կամ միւս դպրոցներն ունին իրենց qas-qas տեսուչ, աւագ-ուսուցիչ-ունիներ *և թեմականները՝ դատ։ Նոյն ձևը պէտք է պահել և այստեղ, որպէս և կար էլ։ Մեզանում փոխանակ մի նոր և օգտակար բան անելու, միշտ ուրիշ ու փնաս ենք անում։ Թաւրիզում իւրաքանչիւր թաղ պարտաւորաբար ունենալու է, ըստ առաջնոյն, իւր առանձին և սեպհական հոգաբարձութիւնն ու տեսուչը՝ անկախ կենդրոնականից և և անկախ մի ընդհ. կազմից։ Այս նոր ըէֆօրմացիան հասկանալի է թէ ինչու այժմ և այն էլ որտեղից է գալիս։ Բայց զարմանալին այն է, որ առաջնորդարանն այդ կասկածելի նորութեան էլ ընդ առաջ է գնում։ Պահելով Ղալայի և Լիլաւայի դպրոցներն առանձին և ոնկախ՝ իրենց հոգաբարձուներով և տեսուչներով, կարելի է սակայն մշակել մի և համանման լաւ ուսումնական ծրագիր բոլորի համար։ Եւ միայն վերջինս էլ դէտք լինի թեմ. իշխանութեան հոգայողութեան առարկան և ոչ թէ դպրոցները բերել միացնել և մէկի դրամը սրամադրելի անել միւսին։ Այս է մեր կարծիքը և կարծում ենք, այսպէս էլ կարտայայտուեն և՝ Ղալացիք ու թոյլ չեն տալ իրենց դպրոցը ենթարկուի այլ հոգաբարձութեան և այլ ղեկավարի։*

Այդ առթիւ կարծում ենք աւելորդ վէճի պէտք չկայ։ Ղալայ թաղը պէտք է ունենայ իր բաղական ուրոյն հոգաբարձութիւնն ու տեսուչը առանց առարկութեան։

ԼՈՒՐԵՐ

ԹԱՒՐԻԶ

Յունիս 2-ին Ղալայի ծխական երկրորդ ժողովում, որին մասնակցում էին ոչ իրաւասուներ և մօտ 6 հոգի անչափահասներ—21 տարին չլրացածներ—ընտրուեց 5 հոգուց բաղկացած քննիչ մի մարմին, յաջորդ ընդհ. ժողովին ներկայացնելու Արամեան դրպրոցի հոգաբարձութեան երեք ամեայ նիւթական հաշուի զեկուցումն ու իւր դիտողութիւններն այդ առիթով։

Նոյն ժողովում ոմն աղանեփեռուր և «ծնողաենամ» պ-ի կողմից առաջարկ եղաւ նաև բարոյականի (??) հաշուեքննութեան մասին, բայց մերժուեց։

Քէյվանցիները մօտ 3 ամիս Արամեան դպրոցում մաշուելուց յետոյ, վերջը մնացին դատարկաձեռն, զի Քարիմ խանը փախաւ։ Զգիտենք դրանից զատ ինչ կլինի ազգային գիւղերի դատի վախճանը. անշուշտ շնորհիւ լաւ հեռամտութեան և իմաստուն դատավարութեան, մի օր էլ լուր կառնենք, որ Մամատ և Իսկանդար խաները էլ փախել են։

Ամսիս 4-ին Ատրպատականի զօրքերի հրամանատար Սարդար Ռաշիդը բաւականաչափ ձիաւորներով, հեռաձկներով և թնդանօթաձիգներով ճանապարհուեց դէպի Արդաբիլի կողմերը, Շահսեվանների արշաւանքների առաջն առնելու համար։

Ամսիս 6-ին Ղալա թաղում, Ռուսաց կլուբի փողոցում, Տաճկահպատակ և յոյն երիտասարդ Եմանքին, մեզ համար անյայտ պատճառով, քարով խփելով մի ոստիկանի ճակատից՝ տեղն ու տեղն սպանել է նորան։ Ցանցաւորը անմիջապէս տարուել է թաղապետի մօտ, որտեղից հեռախօսով դէպքի մասին յայտնուել է Շուշա-էդ-Դովլին։ Մինչև վերջինիցս մի կարգադրութիւն լինելը-Տաճկաց հիւպատոսարանի պահակները գալիս և առնում տանում են Եանքուն։ Ցանցաւորին հիւպատոսարանին յանձնելու պատճառով Շուշա-էդ-Դովլէն Ղալաբէկուն տանել է տուել Մամաթաւա իր մօտ և ենթարկել պատասխանատուութեան։

Ամսոյս 7-ին զուռնայ դաւալով Թաւրիզ մտան Մարաղից եկած հետեւակները և Զարդովլի կոչուած ձիաւորները։

Ամսիս 6-ին առաջն. փոխանորդ Կ. քահանան և գործավար պ. Գասպարը մեկնեցին Սալմաստ։ Երանի թէ նոքա եղած պարտքերի վրայ էլ նորերը չաւելացնէին և մի օգտակար գործ արած լինելուց յետոյ դառնային։

Նոյն յաւելուածը պիտի լոյս տեսնէր շաբաթ երեկոյեան, որպէս զի իր դերը խաղար կիւրակի օրուայ հոգաբարձական խղճմտի ընտրութեան համար. տարաբաղդաբար, որքան և աշխատանք թափուեց, գրաշարները հասցնել չկարողացան և նիւթերը հանեցինք։

Յունիս 10-ին գումարուեց Դ. և անպատճառ հոգաբարձական ընտրական ժողովը, որը վիժեցրին յայտնի կուրսի մարդիկ և ոմն օտարական և անիրաւասու, որ ժողովի նախագահ ու թեմի առաջնորդ Կարապետ եպիսկոպոսին անուանեց «կեղտոտ»։ Սկանդալով ժողովի մասին յաջորդիւ։ Հուրբան ի պատիւ Ղալայիների որ 110 հոգով եկան և Ջարդուկոտոր արին Էսդէկների և Էս-Էրների «սրազան Դաշնակցութիւնը»։

Մեզ հաղորդում են. Լիլաւում մնացել է միայն մի հոգաբարձու, որ իբր հաշիւ չէ տալիս և երբ հասարակական ժողով է լինում նա բացակայում է։ Լսում ենք, որ իբր 3000 թմն. անձեռնամխելի գումար է մնում, բացի 600 թմն. բացից. որ ունի Լիլաւան։

Վերջին պահուն լսեցինք, որ իբր 8000 ռուս. զօրք է անցել Ղարադաղ։ Եթէ այդ ճիշտ է, կնշանակէ այդ կողմերում խաների շահատակութիւնները վերջ ու վախճան կունենան և խաղաղ օրեր կտեսնեն Թուրք ու հայ գիւղացիք։

ՎԵՐՋԻՆ ԽՕՍՔ
ԿԱՄ ԻՄ ԲԱՑԱՏՐՈՒԹԻՒՆՆԵՐԸ

—

«Մտքի» շաբաթաթերթի № 11-ում Պ. Տ. Կարեանի «Արամեան դրպրոցի դրամագլուխը թղթի վրայ» յօդուածաշարքում յիշուած էր նաև Աբրահամ բէկ Դոլուխանեանի պարտքի մասին, որին ի պատասխան շաբթուս մէջ բաց եմ թողել մի թուցիկ։

Պատուող լուրերից այնպէս է երևում, որ իմ մտքը լաւ չէ ըմբռնուել և ես մնացել եմ չհասկացուած։

Այդ թուցիկով երբէք նպատակ չեմ ունեցել անիրաւացի հոչակելու զանազան անձանց և հիմնարկութեանց ունեցած պարտքերը «Արամեան» դրպրոցին։ Պարտքեր՝ որոնց մասին Պ. Տ. Կարեան իրաւացիօրէն վաղուց ձայն է բարձրացրել «Մտքի» էջերում և կոչ կարդում, մի կողմ թողնելով խնամիական կապերը և խիստ պահանջ դնել դպրոցի կոպէկներով հաւաքուած փողերը ստանալ այն պարոններից և հաստատութիւնների անդամներից, որոնք հնարաւորութիւն ունին վճարելու և չեն կամենում վճարել։

Ինքն ըստ ինքեան շատ հասկանալի է, որ իմ մտքից անգամ չէր կարող անցնել անիրաւացի ճանաչել և հոչակել դպրոցի այն պահանջները, որոնք վճարուած են հնչուն դրամով, նպատակ ունենալով շահեցնել և որոնց դիմաց մուրհակներ կան։

Գալով Աբրահամ բէկի դպրոցների հետ ունեցած հաշուին, նորից կանգ չեմ առնիլ այդ մասին մանրամասն բացատրութիւններ տալու, այսքանս միայն կասեմ, որ Աբրահամ բէկից դպրոցի պահանջները առաջացել են հետևեալ կերպով։

Աբրահամ բէկը գիւղերը վարձելուց յետոյ, երբ Ղարադաղ է հասնում, ազգային կալուածները գտնում է մի շատ աննախանձելի դրութեան մէջ, Զիադահ գիւղը թալանուած և աւերուած Իսկանդար խանի և իւր եղբայրների Ռահիմ խանի, Ամիր Ասլան խանի, Հէդայէթ խանի և Շիրինդիլ խանի ձեռքով։ Հուժի և Նորաշէնի անտառներից բաւականաչափ տեղ կտրատուած է Մամատ խանի ձեռքով, (800 կոճղ միմիայն Մամատ խանը տարել է իւր Դամուչի կոչուած գիւղի տները ծածկելու համար, որին կվկայեն բոլոր գիւղացիք), Նորաշէնի տափից 1½ գանգի չափ տեղ Իսկանդար խանը ցանում է և հասոյթը ինքն է վերցնում։ Ռաշլուի 2 դանգը որ ազգապատկան է, Մամատ խանն է տիրացել և արդիւնքը ինքն է տանում։ Նշանակում է 22 դանգ կալուածներից 9½ դանգը (մօտ կէսը) խաների սեպհականութիւն էր դարձել, հաշուեցէք նա և Զիադահի ժողովրդի վնասները, տան եղած չեղածը, տաւար-ապրանքը, Նորաշէնից տարած ապրանքների արժէքը։ Այդ բոլորը մեծ յուսահատութեան մէջ են ձգում Աբրահամ բէկին, որը անմիջապէս 8 երեսից բաղկացած մի տեղեկագրով մանրամասնօրէն յայտնում է Առաջնորդարանին ազգապատկան կալուածների վիճակը և աւելացնում է, որ եթէ յետ չխլու են խաներից գրաւուած հողերը, նոցա պատճառած փնասները և օրինաւոր պատժի չենթարկուին, այլևս ինքը ոչինչ չունի անելու և մնում է Ղարադաղում ազգային կալուածներ ունենալու կամ ունեցածը պահելու յոյսը միանգամ ընդմիշտ կտրել։ Նոյնիսկ պատրաստականութիւն է յայտնում Թէհրան գնալ և առաջնորդարանի օգնութեամբ Թէհրան քաշ տալ խաներին և վնասները պահանջել։ Շատ ցաւում եմ որ թերթի սուղ էջերը թոյլ չեն տալ այդ և դորա նման շատ նամակները նոյնութեամբ տպագրութեան յանձնել, բայց բոլորի քոփիները պատրաստ են և հետաքրքրուողները կարող են գալ, կարդալ և ծանօթանալ մանրամասնութեան հետ։

Այդ նամակը ստացուելուն պէս, Առաջնորդարանը դիմումներ է անում ուր որ հարկաւոր է հեռագրի և գրաւոր հրամաններ է, առնում նահանգապետ Ֆարման-Ֆարմայից Ահարի դատաւորի վերայ, մամուրներ են գնում Ահարից ազգային կալուածքները, ստուգելու գործի էութիւնը, որի իսկութիւնը հաստատում են մի գրութեամբ, որի պատճէնը մամուրի ստորագրութեամբ և կնքով գտնում է Աբրահամ բէկի մօտ. նոյն գրութեան մի օրինակը ուղարկուած է Առաջնորդարանին և մի օրինակ էլ նահանգապետ Ֆարման-Ֆարմային։

Այդ բոլորը շատ լաւ, բայց եկ և տես, որ կառավարութիւնը հնարաւորութիւն չունեցաւ խաներին Թաւրիզ բերելու և փնասները պահանջելու, որի հետևանքը այն եղաւ, որ խաները աւելի ևս երեսը առած ծրագրեցին աւերել Քէchc քանդին։ (ազգային կալուածներին այդ անունն են տալիս Ղարադաղի խաները)։ Քանի անգամ յարձակւում են Նորաշէնի վրայ, Աբրահամ բէկը կարողանում է դիմադրել և թոյլ չէ տալիս հորդաներին գիւղը մտնելու, բայց հրացանաձգութեան ժամանակ մի կին սպանուում է, մի երկրորդը վիժում է իսկ մի 18 տարեկան աղջիկ վախից խելքը կորցնում է և մինչև այժմս էլ խելագար է։

Նորից առաջնորդարան են թափւում ժողովրդի օգնութիւն աղերսող աղաղակները, նորից հրամաններ, նորից մամուրներ, սարվազներ և ձիաւորներ են ուղարկւում Ահարից, որոնք բացի

ժողովրդի վերայ անագին ծախք նըստելուց, ուրիշ ոչ մի արդիւնք չեն ունենում։ Այդ բոլորից յետոյ Առաջնորդարանը նորից յոյսը չէր կտրում. միշտ դիմումներ էր անում պատշաճաւոր կառավարութեան և Աբրահամ բէկի ու ժողովրդի բազմիցս գլուխներին պատասխանում էր, որ հանգիստ մնան, իրենք ամեն ինչ անում են բոլոր վնասները ստանալու և խաներին պատժել տալու համար։

Ինձ համար նոյնիսկ սկզբից հասկանալի էր թէ ինչ հետևանք պիտի ունենային Առաջնորդարանի յուսադրութիւնները, որոնք հիմնուած էին կառավարութեան խոստումների վերայ, ուստի շտապեցի պաշտօնական երկու գրութեամբ յայտնել Առաջնորդարանին, որ այդպիսի պայմաններում ապաս եմ կացուցանում ինձ որեւ իցէ պատասխանատուութիւնից, և աւելացրել եմ, որ կալուածների կէսը գնալուց եւ այսման վնասներից յետոյ՝ Աբրահամ բէկը հնարաւորութիւն չպիտի ունենայ այդչափ վարձ վճարելու, ուստի ֆանի դեռ շուտ է եւ ոչ մի գործի ձեռ չէ զարկել, արէք ինչ որ կամենում էք։

Աւելորդ չեմ համարում ասելու նաև, որ պաշտօնական ոչ մի երաշխաւորութիւն յանձն չեմ առել այդ խնդրում և կապալաթղթի թէ պարսկերէն և թէ հայերէն գրուածքի մէջ իմ անունը չկայ, այլ ուղղակի գրուած է է որ իւր, Աբրահամ բէկի, պատասխանատուութեամբ՝ այնպէս որ պաշտօնական ոչ մի հանգամանք չէ ներկայացնում իմ երաշխաւորութիւնը, իմ երաշխաւորութիւնը եղել է այսպէս, որ վճարումները իմ միջոցաւ և կանոնաւոր կերպով պիտի յանձնուին դըպրոցի վարչութեան (իհարկէ այն դէպքում միայն, երբ դպրոցը կալուածներ ունենայ և ոչ թէ նոյնիսկ չունեցած դէպքում։

Այսպէս Աբրահամ բէկի վստահանալով Առաջնորդարանի խոստումներին, շարունակում է մնալ Ղարադաղում և կանոնաւոր կերպով փող է հասցնում դպրոցին, որի գումարն հասնում է 840 թում. (թուղթիկի մէջ սխալմամբ մոտ 900 թուման է գրուած) Աբրահամ բէկի ութն ամսուայ ընթացքում այդչափ փող հասցնելը ամենալաւ գրաւականը կարող է լինել նորա անխարդախ ընթացքի և որևիցէ յետին մտքեր չունենալուն, իսկ եթէ դպրոցի կալուածքների մոտ կէսը խաների սեպհականութիւն դարձան, անտառները նոցա ձեռքով կտրատուեցան և երկիրը անիշխանութեան մատնուեց, այդ դէպքում ինչ պահանջ կարելի է անել նորանից։ Միթէ հնչուն դրամ է յանձնուած եղել. չէ որ նա ևս ահագին փաստեր ունեցաւ, և կորցնելով նոյնիսկ իրեն սեպհական պահանջները, որ ունէր Ղարադաղում, թէ ժողովրդից և թէ խաներից դատարկաձեռն Թաւրիզ վերադարձաւ։

Յօդուածիս բոլոր կէտերը հիմնուած են օրինաւոր փաստերի և դոկումէնտների վերայ, և այս խնդրով հետաքրքրուողներին խնդրում եմ, մի քանի հոգի ընտրեն իրենց միջից, գալ և ստուգել յօդուածիս իւրաքանչիւր կէտի իսկութիւնը և թերթի միջոցաւ յայտնեն իրենց եզրակացութիւնը ընթերցող հասարակութեան։

Աբրահամ բէկը Ղարադաղում մնացել է ընդամենը 16 ամիս, որի 4 ամիսը սարսափի օրեր էին, երբ ամեն ինչ մոռացած՝ մարդիկ միմիայն կեանքի ապահովութեան համար էին մտածում։ Ղարադաղի ճանապարհը ամբողջ 4 ամիս էր, որ փակուել էր և ոչ մի երթևեկութիւն չկար։ Եղբարք Թումանեանց տեղոյս բաժանմունքը Բագուից խփուած հեռագրից իմացաւ իրենց Ղարադաղում ունեցած գիւղերի վրայ եղած յարձակման մասին։ Այդ ժամանակ էր, որ Ղարադաղի խաներն եկան թալանեցին Մուժամբարը, իսկ ազգային կալուածներից և ոչ մի լուր։ Աբրահամ բէկի ընտանիքը երկմիտ և յուսահատ դրութեան մէջ, դիմեց առաջնորդարան և խնդրեց թոյլտուութիւն Աբրահամ բէկի Թաւրիզ վերադառնալու համար. Առաջնորդարանը նկատի ունենալով քաղաքի անապահով վիճակը, մի գրութեամբ կարգադրեց Աբրահամ՝ բէկին յանձնել գիւղերի կառավարութիւնը Մամատ խանին և Թաւրիզ վերադառնալ։ Ահա, այդպիսի 16 ամսուայ համար հոգաբարձութիւնը պահանջում է Աբրահամ բէկից, ամբողջ երկու տարուայ գիւղի վարձ 800 թուման, երկու տարուայ անտառի վարձ 1000 թուման, դորա վերայ աւելացնում է 12265 դ. 30 կոպէկ, իբր աւելորդ կտրուած անտառի արժէք և վերջապէս այդ բոլորից յետոյ երեք տարուայ տոկոս։

Ահա, թէ որտեղից է առաջացել Աբրահամ բէկի պարտքը «Արամեան» դպրոցին։

Աբրահամ բէկը պարտ էր վճարել դպրոցին մի տարուայ 13 դանդ կալուածի վարձը և մի տարուայ անտառի արժէքը։ Ընդունենք մի բոպէ որ քննիչների զեկուցագրի մէջ յիշուածը իրաւացի է և Աբրահամ բէկը իւր իրաւունքի $^1/_5$-ի չափ աւելորդ անտառ է կտրել, դա լինում է 100 թուման և ոչ թէ 12265 դրան 30 կոպէկ։ Իրականութիւնն այն է, որ Աբրահամ բէկի բացակայութեամբ գիւղացիք երկիւղ կրելով Մամատ խանից, նորա կտրատածն էլ Աբրահամ բէկի հաշուին են դրել և քննիչներին այդպէս զեկուցել. մինչդեռ Աբրահամ բէկի իրաւունք համարուածի մի մասը ածուխ դարձրած հողի տակ մնաց և ճանապարհները փակուած լինելով, հնարաւորութիւն չունեցաւ ծախելու և այդպէս թողնելով Թաւրիզ վերադարձաւ։

Աւելորդ եմ համարում սորանից աւելի ձանձրոյթ պատճառել ընթերցողներին և որպէս վերևում յիշեցի իմ տուած բացատրութիւնները հիմնուած են օրինաւոր փաստերի և դոկումէնտների վրայ, և այդ դոկումէնտների վստահութեամբ է որ թէ Աբրահամ բէկը և թէ յօդուածագիրս, յոյս ունինք պահանջել և ստանալ քաղաքումս գտնուող երկու խաներից, Իսկանդար խանից և Մամատ խանից, ազգային կալուածներին հասցրած փաստերը, որով միանգամ ընդ միշտ փակուած կլինի այդ խնդիրը յօգուտ «Արամեան» դպրոցի պահանջի գանձման և ազգապատկան կալուածների մնացորդի ապահովութեան։

Սպասում ենք որոշ կարգադրութեան պատշաճաւոր իշխանութիւնից, որի համար երևի այնչափ պիտի սպասել, մինչև որ խաները ազատ արձակուին և նորից Ղարադաղ վերադառնալով, ժողովրդի և կալուածների մնացորդի հետ իրենց հաշիւը մաքրեն։

Մուշեղ Շահբազեան

Խմբագիր հրատարակիչ
Ա. Տ. Վարդանեան

ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆՆԵՐ

ԲԱՑՈՒԵԼ Է ՔԱՂԱՔԱՅԻՆ ՀԻՒԱՆԴԱՆՈՑՈՒՄ ԱՏԱՄՆԱԲՈՒԺԱԿԱՆ
բուժարան (լէչէբնիցա)
Արժէքները չափազանց մատչելի են։ Աղքատները բշժկւում են բոլորովին ձրի։ Հիւանդներ ընդունւում են առաւօտեան ժամը 8—1, երեկոյեան ժամը 3—6

ՀԻՄՆԱԴԻՐ ԱՏԱՄՆԱԲՈՅԺ՝ ՄԱՏԻՆԵԱՆ

МАГАЗИНЪ ПАРИЖЪ
MAGAZINS DE PARIS-TABRIZ.
PROPRIÉTAIRE J. D. THOMASSIAN

ՓԱՐԻԶ ՄԱԳԱԶԻՆ

ԿԱՆԱՑԻ ՆՈՐ ԲԼՈՒԶՆԵՐ

ՓԷՇԵՐ ԵՒ ԻՒՊԿԱՆԵՐ

ՆՈՐ ԿՏՈՐՆԵՐ
ԵՒ ԶԱՆԱԶԱՆ ԳՆԻ ՊԱՏԻՍՏՆԵՐ
ՕՋԱՂՆԵՐ ԶԱՆԱԶԱՆ ՏԵՍԱԿԻ
ԵՒ ԽԻՍՏ ԱԺԱՆ

ՇՏԱՊԵՑԷԻՔ ՕԳՏՈՒԵԼ ԱՌԻԹԻՑ

ԳԱՐՈՒՆ

(ՄԱԳԱԶԻՆ ՄԻՍԱԿ ԲԺՇԿԵԱՆԻ)

Նոր ստացել են ՄԱՏԵՌՈՍԵՐԵՑ ԸՆՏԻՐ ԲԼՈՒԶԱՅՈՒՆՆԵՐ, ՍԳԻՏԿԱ ԼԵՌ ՔԱԹԵՆՆԵՐ, տղամարդկանց կոշտ գլխարկներ, երկտիտակ վերարտնիկներ, ճաշակաւոր գալոշներ, անձեռոցիկներ, երեխաների գլխարկներ և զանազան տեսակի հետաքրքիր խաղալիքներ։
Ընդունելով ԵԼԻԶԱՐԵԹ ՍԵՔԼԱՆՈՎՆԵՐԻ ԱՌԻՍԻՏՐԱԿԱՆ ՏԵՆ ներկայացուցչութիւնը, պատիւ ունիմ յայտարարելու ի գիտութիւն սպառողների, որ ընդունում եմ նոյն ֆիրմայի պարասատի պապիրոսների պապիրոսների և ծխախոտների պատուէրները։ Պատուէրներ կարելի է տալ 50000 հատից սկսած. իբրև կանխավճար վերցնում ենք 100-ին 15 0 | 0 գները հաշւում են, գործարանի հաշով, ցանկացողները կարող են վերցնել պրէյսկուրանտ։

مریضخانهٔ تبریز

این روزها شروع کرده‌ایم بمعالجهٔ هر قسم مرضای مقیم و غیر مقیم را هر روز پذیرای خواهد شد در مریضخانه از دو ساعت بظهر مانده الی ظهر و مرضای بی‌بضاعت هرگاه از بکلربکی گری نوشته بیاورند مقیم و غیر مقیم مجانی به کمال مواظبت واهتمام معالجه خواهد شد

مدیر مریضخانه دکتر واهان گویرك‌یان

ТАВРИЗСКАЯ ГОРОДСКАЯ
Больница

Возобновился амбулаторный и стаціонарный пріембольныхъ, ежедневно отъ 10—12 часовъ.
Бѣдные по запискѣ отъ г. Байларбеги принимаются безплатно

Завѣдующій больницей
докторъ Ваганъ Геворковъ